



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

### Հ Ր Ա Մ Ա Ն

« 03 » մարտի 2015 թ.

N 19

ք. Ստեփանակերտ

Մ.Գ.Մանգասարյանին ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակից հանելու մասին

ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 11 առ 10.06.2013թ. հրամանով՝ ԼՂՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա (արձանագրություն N 02 առ 07.06.2013թ.), ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի դատախազի տեղակալ, արդարադատության 2-րդ դասի խորհրդական Մ.Գ.Մանգասարյանը ընդգրկված էր ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակում:

Հաշվի առնելով, որ ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 23 առ 02.03.2015թ. հրամանով Մ.Գ.Մանգասարյանը նշանակվել է ԼՂՀ Մարտակերտի շրջանի դատախազի պաշտոնին, ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով և 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով

### Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ԼՂՀ Մարտակերտի շրջանի դատախազ, արդարադատության 2-րդ դասի խորհրդական Միեր Գեներդիի Մանգասարյանին հանել ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակից:

2. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին, ԼՂՀ քաղշրջդատախազներին:

3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Արդարադատության երրորդ դասի  
պետական խորհրդական

Ա.Ա.Մուսիյան